
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓԱԹԵԹ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ
ՆԵՐԱՌՈՒՄԸ
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՄԵՋ

Սույն առաջարկությունների փաթեթը պատրաստվել է «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից «Գենդերային ուսուցման ինտեգրումը ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է շվեդական «Կվիննա տիլլ Կվիննա» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

Առաջարկությունների հեղինակներ՝

Արմինե Իվանյան

Կրթության փորձագետ

Աննա Նիկողոսյան

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ գործադիր տնօրեն

Գլխավոր խմբագիր՝

Աննա Արուճյան

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ հիմնադիր և հոգաբարձու

Համակարգչային ձևավորում՝

“Ան-Տեխ” ՍՊԸ

Տպագրվել է «Զանգակ» հրատարակչությունում
Տպաքանակ՝ 500 օրինակ

www.swv.am

Երևան, 2014

© «ՀԱՍԱՐԿԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԲՌՆՈՒԹՅԱՆ» ՀԿ

Բովանդակություն

1. Նախաբան	4
1.1 Կազմակերպության մասին.....	4
1.2 Ծրագրի մասին.....	5
2. Իրավիճակի վերլուծություն գենդերային քաղաքականության համատեքստում	8
2.1 Գենդերային անհավասարությունը և կանանց հիմնախնդիրները Հայաստանում	8
2.2 Գենդերային քաղաքականությունը կրթության ոլորտում ..	14
2.3 Հասարակագիտություն առարկայի դասագրքերի վերլուծություն գենդերային տեսանկյունից.....	17
3. Առաջարկություններ	25
4. Ամփոփում	33

1. Նախաբան

1.1 Կազմակերպության մասին

«Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2001 թվականին: Հիմնադրման օրվանից կազմակերպությունն իրականացնում է ծրագրեր՝ ուղղված երիտասարդ կանանց շահերի պաշտպանությանը, նրանց իրավագիտակցության և իրազեկության բարձրացմանը, հասարակական ակտիվության խթանմանը, լիդերի հմտությունների զարգացմանը, ինչպես նաև կին իրավապաշտպանների ինստիտուտի կայացմանը:

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի տեսլականն է առանց բռնության քաղաքացիական հասարակություն ունենալը, հասարակություն, որտեղ պետությունը կառավարում են ժողովրդավարական արժեքներ կրող անձիք, մարդիկ, ովքեր հարգում են գենդերային հավասարության գաղափարախոսությունը և աջակցում դրա հաստատմանը, հասարակություն, որտեղ կանանց հանդեպ բռնությունը տեղ չունի:

Կազմակերպության անդամների առաքելությունն է կիսել իրենց գիտելիքները, փորձը և հմտությունները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, երիտասարդ կանանց ու աղջիկներին կրթել ու ներշնչել՝ լինելու ակտիվ երկրի քաղաքակական, սոցիալական, մշակութային կյանքում, քաջալերել նրանց դառնալու առաջնորդներ, կին իրավապաշտպաններ:

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն գործում է

Երևանում և հանրապետության 5 մարզերում՝ Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Սյունիք և Տավուշ: Կազմակերպությունն իր 13-ամյա գործունեության ընթացքում ձևավորել է «Հասարակություն առանց բռնության ցանցը», որն ընդգրկում է վերոնշյալ մարզերի 100-ից ավել ակտիվ երիտասարդներ:

Կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի Սևազգեստ կանայք» շարժման հիմնադիրը, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի, «ՄՄԿ-ի ԱԽ 1325 բանաձևի մոնիտորինգի հայկական խմբի», «Հարավային Կովկասում Երիտասարդ կանանց ցանց»-ի, «ԱՍԹԲԱ» տարածաշրջանային և «Կին խաղաղարարների համաշխարհային ցանց»-ի անդամ:

1.2 Ծրագրի մասին

Սույն Առաջարկությունների փաթեթը պատրաստվել է «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից 2012-2013 թթ.-ին իրականացվող «Գենդերային ուսուցման ինտեգրումը ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է շվեդական «Կվիննա տիլլ Կվիննա» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

Երկու տարի տևողությամբ ծրագրի նպատակն էր ուսումնասիրել, վերլուծել և վերանայել Հասարակագիտություն առարկայի դասագրքերի բովանդակությունն ու դասավանդման մեթոդները գենդերային տեսանկյունից և առաջարկել գենդերային կրթությանն առնչվող նոր թեմաներ ու դասավանդման նոր մոտեցումներ:

Ծրագիրն իրականացվել է Երևանում և ՀՀ 5 մարզերում՝ Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Սյունիք և Տավուշ: Ծրագիրը բաղկացած էր 3 փուլից:

Ծրագրի առաջին փուլը ենթադրում էր գենդերային տեսանկյունից Հասարակագիտություն առարկայի դասագրքերի բովանդակության հանգամանակից վերլուծություն, դասագրքերում գենդերային ուսուցման տեսանկյունից առկա բացերի վերհանում, Հասարակագիտություն առարկայի չափորոշիչների և առարկայի դասավանդման նպատակների գենդերային զգայուն ուսումնասիրություն:

Ծրագրի երկրորդ փուլը ներկայացնում էր կլոր սեղանների անցկացում հանրակրթական դպրոցների Հասարակագիտություն առարկայի ուսուցիչների, դպրոցի տնօրենների, ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության, Կրթության ազգային ինստիտուտի, Կրթության պետական տեսչության, մարզպետարանների Կրթության վարչության, մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, քաղաքապետարանի կրթության վարչության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անդամների հետ:

Կլոր սեղաններն անցկացվել են վերոնշյալ 5 մարզերում և Երևանում: Կլոր սեղաններին ընդհանուր թվով մասնակցել է 140 մասնագետ:

Կլոր սեղանների անկացման նպատակն էր մասնակիցներին հնարավորություն տալ կիսել կրթության ոլորտում իրենց ունեցած հարուստ փորձը, արտահայտել կարծիքներ և հանդես գալ կոնկրետ առաջարկություններով գենդերային բաղադրիչը Հասարակագիտություն առարկայի

բովանդակություն և դասավանդման մեթոդաբանություններ առելու ուղղությամբ: Յուրաքանչյուր կլոր սեղանի ընթացքում իրականացվել են խմբային աշխատանքներ և քննարկումներ, իսկ դրանց արդյունքում ստացված առաջարկները խմբագրվել են և ներառվել Առաջարկությունների փաթեթում:

Ծրագրի երրորդ փուլը 5 մարզերի և Երևանի կլոր սեղանների արդյունքում մշակված «Գենդերային ուսուցման ինտեգրումը ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան» համալիր Առաջարկությունների փաթեթի ձևավորումն էր, դրա ներկայացումը հանրությանը և հանձնումը ՀՀ Կրթության և Գիտության նախարարություն՝ հետագա համագործակցության և առաջարկությունների ընդունման ակնկալիքով:

Հանրակրթական դասագրքերի բովանդակության մեջ Առաջարկությունների փաթեթում նշված փոփոխությունների կատարումը լայնորեն կնպաստի առարկայի դասավանդման նպատակներից թերևս կարևորագույնի իրականացմանը, այն է՝ «Ժողովրդավարական հասարակության քաղաքացու ձևավորում, ժողովրդավարության հիմնարար արժեքների յուրացում, ու այդ ամենի արդյունքում, քաղաքացիական հասարակության ձևավորում»:

2. Իրավիճակի վերլուծություն գենդերային քաղաքականության համատեքստում

2.1 Գենդերային անհավասարությունը և կանանց հիմնախնդիրները Հայաստանում

Հասարակությունը բաղկացած է անհատներից, մարդկանց խմբերից, որոնք ունեն ընդհանուր շահեր, արժեքներ, վարքականոններ: Ազգային արժեքների ու նորմերի ձևավորման վրա ազդում են տվյալ երկրի պատմական փորձը, հասարակության քաղաքակրթության աստիճանը, կրոնը և այլ սոցիալ-մշակութային գործոններ: Դրանք տարբեր սոցիալական խմբերի կյանքում տարբեր կերպ են դրսևորվում, և այդ խմբերի միջև հարաբերություններով, համագործակցությամբ կամ մրցակցությամբ էլ պայմանավորվում է հասարակության կյանքը:

Բոլոր հասարակություններում անխտիր այսօր կան կարծրատիպեր՝ լինեն դրանք ազգային, սոցիալական, թե գենդերային: Սակայն, եթե հասարակության զարգացման փուլերի հետ համընթաց կոտրվում, վերափոխվում և վերանում են որոշ կարծրատիպեր, իսկ դրանց փոխարեն առաջանում են նորերը, Հայաստանում կարծես թե կարծրատիպերը որպես ազգային հարստություն փոխանցվում են սերնդեսերունդ:

2010-2011 թթ.-ին «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանում իրականացված «Զերծ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցման համաձայն՝

- Կանանց 43.7 %-ը կարծում է, որ կինն է դրդում տղամարդուն իր վրա ձեռք բարձրացնել:
- Տղամարդկանց 60.4 %-ը և կանանց 36.9 %-ը կարծում է, որ կինը չի կարող լինել լավ ղեկավար:
- Կանանց 42.3 %-ը կարծում է, որ կինը բիզնեսում հաջողության է հասնում միայն անկողնու միջոցով:
- Կանանց 53.4 %-ը համաձայն է, որ եթե կինը զբաղված է կարիերայով, ապա խնդիրներ ունի անձնական կյանքում:
- Կանանց 63.8%-ը ավստում է, որ տղամարդ չի ծնվել:

Ամենացավալին թերևս այն է, որ նման պատասխանների զգալի հատվածը պատկանում է 18-25 տարեկան երիտասարդներին:

Գենդերային հիմքով կարծրատիպերը ոչ միայն խոչընդոտում են կանանց և աղջիկների ներգրավվածությանը որոշումների կայացման գործընթացներում քաղաքականությունում, մասնավոր սեկտորում, տեղական ինքնակառավարման մարմիններում և մի շարք այլ կարևոր օղակներում, այլև շատ հաճախ հանգեցնում են գենդերային հիմքով և/կամ ընտանեկան բռնության:

Ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մի շարք հետազոտություններ փաստում են, որ կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում լուրջ հիմնախնդիր է և կարիք ունի կանխարգելման ու կարգավորիչ մեխանիզմների ներդրման: Կանանց նկատմամբ բռնության տարածվածությունը Հայաստանում փաստում են նաև կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակեր-

պությունների թեժ գծերի կողմից ստացված տարեկան կտրվածքով մի քանի հարյուր ահազանգերը:

2008 թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի և Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ համապետական հարցման համաձայն՝

Կանանց՝

- 25%-ը ենթարկվում է հոգեբանական բռնության կամ խտրականության,
- 8.9%-ը՝ ֆիզիկական բռնության,
- 9.5%-ը՝ ֆիզիկական և/կամ սեռական բռնության:

Ըստ «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի «Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ» զեկույցի՝ ընտանեկան բռնության ենթարկված հարցվածների 45.1 %-ը դրսևորել է պասիվ վարքագիծ և ոչինչ չի արել ընտանեկան բռնությունը դադարեցնելու համար:

2007 թ.-ին Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ-ի կողմից պատվիրված և Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացված «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում» համազգային հարցման համաձայն՝

- Հարցմանը մասնակցած կանանց 66 %-ը ենթարկվել է հոգեբանական բռնության:

- Կանանց 27 %-ը ենթարկվել է ոչ ծանր ֆիզիկական, իսկ 12 %-ը՝ ծանր ֆիզիկական ճնշման:
- Ֆիզիկական բռնություն կիրառող բռնարարների 85 %-ն ամուսիններն են, 10 %-ը՝ սկեսուրները:
- Բռնության ենթարկված կանանց մոտ 40 %-ը հայտնել է, որ երեխաներն ականատես են եղել բռնությանը:
- Հարցման մասնակիցների 60.5 %-ը համաձայն է, որ ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում:
- Բռնության ենթարկված կանանց միայն 29 %-ն է դիմել օգնության՝ մեծամասամբ ընտանիքի անդամներին:

«Ամնեսթի ինթերնեյշնլ» (Amnesty International) միջազգային իրավապաշտպան կազմակերպության Հայաստանում մարդու իրավունքների մասին 2008 թ.-ի զեկույցի համաձայն՝ Հայաստանում կանանց ավելի քան մեկ քառորդը ենթարկվել է ֆիզիկական բռնության ընտանիքի անդամի կողմից, իսկ երկու երրորդը ենթարկվել է հոգեբանական բռնության:

Զեկույցը նաև հրապարակել է տարբեր աղբյուրներից ստացված վիճակագրություն Հայաստանում կանանց նկատմամբ բռնության իրավիճակի մասին, մասնավորապես՝

- Կանանց մինչև 69 %-ը ենթարկվում է ֆիզիկական բռնության զուգընկերների կողմից առնվազն մեկ անգամ իրենց կյանքում:¹
- 5 կանանցից մեկը ստիպված թողնում է աշխատանքը սեռական ոտնձգությունների պատճառով:²

¹ «Բռնության եւ առողջության վերաբերյալ համաշխարհային զեկույց», Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնն, 2002

Համաձայն ՀՀ Ոստիկանության պաշտոնական տվյալների՝ միայն 2012 թվականին 5 կին մահացել է ընտանեկան բռնության հետևանքով՝ առանց մայրական խնամքի թողնելով 12 մանկահասակ երեխա: Ավելին, ըստ ՀՀ Ոստիկանության վիճակագրական տվյալների՝ նույն թվականին գրանցվել է ընտանեկան բռնության 766 դեպք, որից միայն 621-ը կատարվել է կանանց հանդեպ:

Համաձայն ՀՀ Ոստիկանության պաշտոնական տվյալների՝ 2013 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության է ենթարկվել 586 կին:

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից ստեղծված Արագ Արձագանքման Խումբը միայն 2014թ.-ի հունվար-մարտ ամիսներին արձանագրել և լուսաբանել է ընտանեկան բռնության հետևանքով սպանված 5 կանանց դեպք:

Համաշխարհային տնտեսական ֆորումը հրապարակել է 2013թ.-ի «Գենդերային անհավասարության համաշխարհային զեկույցը» (The Global Gender Gap Report 2013), համաձայն որի՝ Հայաստանը 136 երկրների շարքում զբաղեցրել է 94-րդ տեղը՝ նահանջելով 2012թ.-ի համեմատ 2, իսկ 2011 թ.-ի համեմատ՝ 8 կետով:

Ամենամյա զեկույցի արդյունքները հիմնված են 4 հիմնական ոլորտներում (տնտեսություն, քաղաքականություն, առողջապահություն, կրթություն) կանանց և տղամարդկանց ներգրավվածության վերաբերյալ ցուցանիշների վրա: Չեկույցի նպատակն է պարզել, թե կանանց ու

² «Աշխատավայրերում կանանց նկատմամբ սեքսուալ ոտնձգությունները» հետազոտություն, «Կանանց ֆորում» հասարակական կազմակերպությունը և «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոն, դեկտեմբեր 2004

տղամարդկանց միջև եղած «բացը» որքանով է խորանում կամ հակառակը, և արդյոք կանայք կարողանում են հաղթահարել գենդերային անհավասարակշռությունը: Զեկույցի հիմնական եզրակացությունը այն է, որ գենդերային կարծրատիպերը և գենդերային անհավասարությունը խոչընդոտում են երկրների տնտեսական զարգացումը:

Այսպիսի տվյալները լուրջ մտորումների տեղիք են տալիս, իսկ հայտնի ճշմարտություն է, որ հասարակության մշակույթի, հասարակական գիտակցության փոփոխման արդյունավետ գործիքներից մեկը կրթությունն է՝ և՛ որպես դաշտ, և՛ որպես մեխանիզմ: Համապարփակ, համակցված որակյալ կրթությունը ամենակարևոր բաղադրիչն է՝ կանխարգելելու կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը և կոտրելու հասարակության զարգացմանը խոչընդոտող գենդերային հիմքով կարծրատիպերը:

Պատահական չէ, որ վերոնշյալ «Ամենսթի ինթերնեյշնլ» կազմակերպությունը Հայաստանում մարդու իրավունքների մասին 2008 թ.-ի իր զեկույցում կոչ է անում Հայաստանի կառավարությանը դպրոցական ծրագրերում ներդնել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ մոդուլ, որը կմատնանշի, որ նման բռնությունը տարածված քրեական հանցագործություն է, այլ ոչ թե անձնական, ներընտանեկան խնդիր: Մարդու իրավունքների ուսուցման ներդնումը դպրոցական կրթության ուսումնական պլանն ընդգրկել է նաև Հայաստանի Հանրապետության առաջին Համընդհանուր Պարբերական Դիտարկման /Universal Periodic Review/ առաջարկություններում:

Կրթության բովանդակությունը ընդգրկում է ոչ միայն զուտ գիտելիքներ, այլ նաև կարողություններ և հմտություններ,

արժեքային համակարգ՝ բարոյական, արժեքային նորմեր, պատկերացումներ, աշխարհայացք և այլն: Ուստի, հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրները լուծելու հիմնարար և ազդեցիկ միջոցը կրթությունն է:

Այս առումով մեծ պատասխանատվություն է դրված հանրակրթական դպրոցի վրա, որի գլխավոր նպատակներից մեկը անձի՝ որպես քաղաքացու ձևավորումն է:

Ուստի, կարևորագույն քայլերից մեկը կարելի է համարել այն, որ գենդերային բաղադրիչը գիտելիքների, հայացքների և արժեքային կողմնորոշումների միջոցով ընդգրկվի կրթության բովանդակության և դպրոցի սոցիալական համակարգի մեջ:

Հարկ է նշել, որ գենդերային բաղադրիչի ներդրումը ուսումնական պլան միայն «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի հիմնավորված ցանկությունը չէ. ինտեգրման համար արդեն իսկ պաշտոնապես ստեղծված են բոլոր նորմատիվային հիմքերը:

2.2 Գենդերային քաղաքականությունը կրթության ոլորտում

Կրթության ոլորտում գենդերային հավասարության նախադրյալները ամրագրված են դեռևս 1999թ.-ին ընդունված «Կրթության մասին» օրենքում, որտեղ նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից,

սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից»:³

Կրթության ոլորտում գենդերային հավասարության հարցը և դրա ուղղությամբ իրականացված քաղաքականությունը պետք է դիտարկել ընդհանուր գենդերային քաղաքականության համատեքստում:

2010թ. ընդունված «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», որը գենդերային ոլորտի կարևորագույն փաստաթուղթն է, կրթության ոլորտում որպես հիմնական նպատակ մատնանշում է՝

«սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացիների դաստիարակում, էգալիտար գենդերային մշակույթի ձևավորում, աջակցություն հասարակությունում գենդերային հավասարության, սոցիալական արդարության և սոցիալական ազատությունների ձեռքբերմանը»:

Փաստաթղթում ընդգծված է նաև այն գաղափարը, որ գենդերային հավասարությունը ժողովրդավարական գերակա արժեք է, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման:

Գենդերային քաղաքականության ռազմավարության մեջ առանձնահատուկ ամրագրված է՝

- *«...գենդերային կրթության ներդրումը՝ որպես պարտադիր բաղադրիչ, կրթական համակարգի բոլոր մակարդակների ուսումնական ծրագրերում»:⁴*

³ Հայաստանի Հանրապետության Կրթության մասին օրենք, հոդված 6

⁴ Գենդերային քաղաքականության հայեցակարգ, Կետ 4.4, Գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները կրթության ոլորտում

- *«Միջնակարգ կրթության բովանդակության բարեփոխում գենդերային բաղադրիչի ներդրմամբ՝ առաջին հերթին հասարակագիտական ճյուղերի առարկաներում»⁵*

Միաժամանակ սահմանվում է նաև ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշների ներդրման անհրաժեշտությունը և վերլուծական գործիքների մշակումը՝ գենդերային հեռանկարի ներդրման նպատակով:

Գենդերային քաղաքականության ռազմավարության այս դրույթներն ավելի գործնական արտահայտություն են գտնում ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության միջոցառումների ծրագրում, որտեղ սահմանվում են կոնկրետ անելիքներ: Օրինակ, 2012թ.-ի Միջոցառումների ծրագրով նախատեսվում էր ուսումնամեթոդական գրականության գենդերային փորձաքննության իրականացում, գենդերային կարծրատիպեր պարունակող նյութերի վերհանում/բացառում, գենդերային փորձաքննության չափանիշների մշակում:

Այս առումով, Հասարակագիտություն առարկայի դասագրքերի վերլուծությունը կարելի է համարել ՀՀ Կառավարության սահմանած խնդիրների իրականացմանն ուղղված մի քայլ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից:

⁵ Գենդերային քաղաքականության հայեցակարգ, Գետ 4.2, Առաջնահերթ հիմնախնդիրները կրթության ոլորտում

2.3 Հասարակագիտություն առարկայի դասագրքերի վերլուծություն գենդերային տեսանկյունից

Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է կրթության բովանդակությունը, առարկաների չափորոշիչներն ու ծրագրերը, որոնց հիման վրա էլ ստեղծվում են դասագրքերը, օրինակելի ուսումնական պլանները և ուսումնական գործընթացը կանոնակարգող նորմատիվ այլ փաստաթղթեր:

Հասարակագիտություն առարկայի չափորոշչում և ծրագրում ամրագրված է, որ *«Առարկայի գլխավոր նպատակն է սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումը, ինչպես նաև սովորողի կողմից անձնական, հասարակական և ազգային շահերի միասնության, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում սեփական մասնակցության, մարդկանց միջև հավասարություն, արդարություն, հանդուրժողականություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության, գենդերային հավասարության և հասարակության մեջ սեռային խտրականության բացառման կարևորումը»:*

Իսկ դասագրքերն այն կարևորագույն գործիքներն են, որոնց միջոցով փոխանցվում և վերարտադրվում են հիմնական գիտելիքները: Բացի այդ, դասագրքերն արտացոլում են նաև հասարակական իրողությունները, սոցիալական նորմերը և ընդհանրապես մեր հասարակության տրամաբանությունը: Այս առումով Հասարակագիտություն առարկայի դասագրքերը ևս բացառություն չեն:

Մեր կողմից գենդերային վերլուծության են ենթարկվել 2012-2013 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի ցանկում ընդգրկված 8-12-րդ դասարանների Հասարակագիտություն առարկայի դասագրքերը՝

Հասարակագիտություն. 8-րդ դասարան (Ս. Խաչատրյան և ուրիշներ, «Տիգրան Մեծ» 2007)

Հասարակագիտություն. 9-րդ դասարան (Գ. Ղազինյան և ուրիշներ, «Տիգրան Մեծ» 2008)

Հասարակագիտություն. 10-րդ դասարան (Ս. Պետրոսյան և ուրիշներ, «Տիգրան Մեծ» 2009)

Հասարակագիտություն. 11-րդ դասարան (Ս. Խաչատրյան և ուրիշներ, «Տիգրան Մեծ» 2010)

Հասարակագիտություն. 12-րդ դասարան (Ս. Պետրոսյան և ուրիշներ, «Տիգրան Մեծ» 2011):

Այս դասագրքերի գենդերային փորձաքննությունը ցույց տվեց, որ ոչ մի դասագրքում չի խոսվում գենդերի՝ որպես սոցիալական կերտվածքի մասին, թեկուզ մեկ անգամ օգտագործված, առավել ևս բացատրված չեն «գենդեր», «գենդերային հավասարություն», «գենդերային խտրականություն», «գենդերային կարծրատիպեր», «գենդերային հիմքով բռնություն» և գենդերային հիմնախնդիրներին առնչվող այլ կարևորագույն հասկացությունները:

Դասագրքերում կանանց և տղամարդկանց, ինչպես նաև ընտանեկան հարաբերությունները ներկայացվում և վերլուծվում են միայն օրենքի և իրավունքի տեսակետից: Անշուշտ, անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, արգելվում է սեռի հիմքով խտրականությունը, սակայն դե յուրե ամրագրված սահմանա-

դրական իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական գործելակեպ:

Թեմաներ, որոնք արժարժում են այնպիսի կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են գենդերային հարաբերությունները հասարակության մեջ՝ գենդերային դերեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային խտրականություն, գենդերային անհամաչափություն հասարակական և քաղաքական տարբեր ոլորտներում և այլն, ընդգրկված չեն և ոչ մի դասագրքում: Այնինչ այս փաստաթղթում բերված բազմաթիվ վիճակագրական տվյալները խոսում են մեր հասարակությունում առկա գենդերային անհավասարության, կանանց և տղամարդկանց սոցիալական դիրքի և կյանքի հնարավորությունների անհամաչափության, ընտանիքում, աշխատաշուկայում, հասարակական և քաղաքական ոլորտներում առկա գենդերային խտրականության մասին:

Դասագրքերում տեղ են գտել գենդերային կարծրատիպեր բովանդակող նյութեր:

Օրինակ, 9-րդ դասարանի դասագրքի 81-րդ էջում հանդիպում ենք այսպիսի ձևակերպման՝

«Կանանց էմանսիպացիան՝ ազատագրումը, երբեմն հասկացվում է որպես տղամարդու կենսաձևի վատագույն դրսևորումների կրկնություն: Օրինակ՝ ծիւելը, կոպտությունը, սեռական սանձարձակությունը: Կանայք զբաղվում են տղամարդկային սպորտաձևերով: Ի՞նչ եք մտածում այս մասին: Բաժանվե՛ք խմբերի և քննարկե՛ք:»

Բերված ձևակերպումից ստեղծվում է այնպիսի պատկերացում, թե կանանց էմանսիպացիան «տղամարդու կենսաձևի» նմանակումն է իր լավագույն կամ վատագույն դրսևորումներով: Նմանօրինակ հարցադրումը արդեն իսկ

կանխակալ նախատրամադրվածությունն է ստեղծում աշակերտի մոտ խմբային աշխատանք կատարելու համար:

Բացի այդ, ձևակերպումից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե կա հստակ սահմանազատում տղամարդկանց և կանանց սպորտաձևերի միջև: Ծանրամարտը երկար ժամանակ հայ իրականության մեջ ընկալվել է որպես տղամարդու սպորտաձև, այնինչ վերջին տարիներին հայ կին մարզիկները և՛ Հայաստանը, և՛ ամբողջ աշխարհը զարմացրել են իրենց հաղթանակներով ու կարողություններով:

Մեկ այլ օրինակ. 10-րդ դասարանի դասագրքի 165-րդ էջում նշված է՝

«Ամերիկացի հոգեբան Ու. Ֆ. Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հինգական հիմնական պահանջմունքներ, որոնց բավարարումն ապահովում է ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի՝ ընդհուպ ամուսնալուծության: Տղամարդկանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) սեռական բավարարվածություն, 2) հանգստի ուղեկից, 3) հմայիչ կին, 4) տնային տնտեսության վարում, 5) հիացմունք: Կանանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում. 1) քնքշություն, 2) խոսելու, զրուցելու հնարավորություն, 3) ազնվություն և անկեղծություն, 4) ֆինանսական աջակցություն, 5) ընտանիքին նվիրվածություն:»

Իրականում սա հոգեբանի կարծիք է, որը իրականության հետ կարող է ինչպես համընկնել, այնպես էլ չհամընկնել: Իսկ աշակերտն իր հերթին կարող է համաձայնել, կամ չհամաձայնել նման կարծիքի հետ: Սակայն, քանի որ մատուցված նյութում որևէ կերպ հնարավորություն չի տրվում կասկածի տակ դնել վերոնշյալը կամ արտահայտել

կարծիքներ, հավանականություն կա, որ վերոնշյալ պահանջմունքները կրնակավեն որպես նորմեր և կամրագրվեն աշակերտների հետագա ներընտանեկան հարաբերություններում:

12-րդ դասարանի 114-րդ էջում նշված է՝

«Տնտեսական փոփոխությունների և ֆիզիկական աշխատանքի աստիճանաբար երկրորդ պլան մղվելու արդյունքում կանայք ավելի ու ավելի շատ են աշխատում դրսում՝ նպաստելով ընտանիքի նյութական բարեկեցության ապահովմանը: **Թվում է, թե դա դրական փոփոխություն է, սակայն** խնդիր կա կանանց և տղամարդկանց նոր դերերին համապատասխան նրանց մտագործելակերպի մշակման, նրանց նոր ինքնությունների որոնման»:

«Թվում է, թե դա դրական փոփոխություն է, սակայն...» արտահայտության միջոցով հեղինակը արդեն իսկ անուղղակի կերպով մատնանշում է, որ այդ փոփոխությունը դրական համարվել չի կարող: Բացի այդ, հեղինակի նմանօրինակ պնդումը հնարավորություն չի տալիս վերլուծել իրավիճակն օբյեկտիվորեն և ունենալ սեփական եզրահանգումներ:

Մեկ այլ օրինակ նույն էջից՝

«Մտածե՛ք, արդյո՞ք ընդունելի է, որ կինը դրսում լիարժեք աշխատանքային օրվանից հետո տանն էլ լիովին ծանրաբեռնված լինի աշխատանքային պարտականություններով, իսկ, օրինակ, գործազուրկ ամուսինն իր «տղամարդկային ինքնության» մեջ տան աշխատանքներին մասնակցելու տեղ չունենա... Ի՞նչ էք կարծում, ինչպիսի՞ն կմեծանան նման ընտանիքի երեխաները»:

Թերևս կարելի է ենթադրել, որ այստեղ հեղինակը միտում ունի առաջ քաշելու այն պնդումը, որ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք կարող են հավասարաչափ ընդգրկված լինել ինչպես տնային գործերում, այնպես էլ աշխատաշուկայում: Այդուհանդերձ, բերված օրինակից այդ պնդմանը հասնելը այդքան էլ դյուրին չէ՝ առավել ևս դպրոցահասակ երեխայի համար: Աշակերտի մոտ կարող է ստեղծվել այնպիսի տպավորություն, թե կնոջ աշխատելը կարող է հանգեցնել երեխայի սխալ կամ ոչ բավարար դաստիարակմանը, տղամարդու ներգրավվածությունը տնային տնտեսությունում և երեխաների դաստիարակման հարցում ամոթալի է՝ ելնելով «տղամարդկային ինքնությունից», ուստի, այս ամենից ելնելով, կինը չպետք է աշխատի, այլ զբաղվի միմիայն տնային գործերով:

Նման եզրահանգման կարելի է գալ նաև հետևյալ ձևակերպումից՝

«Եթե ընտանիքում աշխատում են և՛ հայրը, և՛ մայրը, ապա ո՞վ է հասցնում զբաղվել երեխաների դաստիարակությամբ, հոգևոր աճով: **Պարզվում է, որ ավանդական հասարակություններն ունենին այս և նման հարցերի պատասխանները, իսկ մեր արդի հասարակությունում նման հարցերը դեռ սպասում են իրենց պատասխանին:**»

Ստացվում է, որ ավանդական հասարակություններում, որտեղ կնոջ առաքելությունը ընտանեկան գործերով զբաղվելն էր, իսկ տղամարդունը՝ ընտանիքից դուրս աշխատանքը, մասնակցությունը քաղաքական, հասարակական և մշակութային կյանքին, երեխաներն առավել դաստիարակված էին մեծանում, ուստի ընդունելի և խրախուսելի է ընտանիքի միայն ավանդական մոդելը, որտեղ կանայք դրսում լիարժեք ինքնաիրականացման հնարավորությունից զուրկ են:

Բացի այդ, նույն էջում նկատելի է լատենտ քամահրանք արևմտյան երկրների ու նրանց ընտանեկան հարաբերությունների հանդեպ: Մասնավորապես՝

«Արևմտյան որոշ երկրներում արդեն վաղուց ընդունված է հայրության նոր ընկալումը, ըստ որի բացի բնական ձևով կերակրելուց (ինչը դեռևս մայրերի մենաշնորհն է), մնացած բոլոր դեպքերում հայրը մորը հավասար հոգ է տանում երեխայի հանդեպ»:

Հեղինակն այսպիսով նույնականացնում է կնոջ և տղամարդու կենսաբանական և սոցիալական հատկանիշները, այնինչ կենսաբանական հատկանիշները կապված են մարդու սեռի հետ, իսկ սոցիալական հատկանիշները՝ գենդերի:

Եվ վերջապես, կանանց աշխատելու հնարավորությունն անմիջականորեն կապվում է ծնելիության հետ: Այսպես՝

«Պարզվում է, որ այն հասարակություններում, որտեղ կանայք լիարժեք մասնակցում են հասարակական կյանքին, օրինակ՝ արևմտյան երկրներում, բնակչության վերարտադրության մակարդակը շեշտակիորեն ընկնում է»:

Հիմնվելով նման պնդման վրա՝ կարելի է կարծել, թե կանանց միակ առաքելությունը ազգաբնակչության աճի ապահովումն է, և, ի հեճուկս կնոջ ցանկության կայանալու որպես հասարակության լիարժեք անդամ, կնոջ գերխնդիրը մնում է վերարտադրողականության գործառույթը: Մինևնույն ժամանակ, քանի որ ավանդական հասարակություններում երեխայի դաստիարակման գործառույթն ամբողջովին կնոջ ուսերի վրա է, հետևաբար կնոջ հավասար հնարավորությունների ապահովումը աշխատաշուկայում այնքան էլ ողջունելի

չէ: Նմանօրինակ պնդումը նախ բացասական վերաբերմունք է ստեղծում աշխատող կանանց ու կնոջ՝ աշխատելու հավասար հնարավորություն ունենալու ցանկության նկատմամբ և սահմանափակում է այն աղջիկների հնարավորություններն ու ցանկությունները, ովքեր ցանկանում են կայանալ որպէս մասնագետ և մեծ ձեռքբերումներ ունենալ:

Դասագրքերի այս փորձաքննությունը գալիս է ապացուցելու այն իրավիճակը, որ նկարագրված է Գենդերային քաղաքականության հայեցակարգում՝ «կրթության այսօրվա համակարգը դեռևս չի հաղորդում գենդերայնորեն հավասարակշռված դերային սպասումները և հասարակությունում կանանց և տղամարդկանց հավասարության իդէալները: Հանրակրթական դպրոցում ներդրվող ուսումնամեթոդական համալիրների գենդերային վերլուծություն չի կատարվում, հատկապէս հասարակագիտական առարկաների, որոնք ժողովրդավարական համոզմունքներ և քաղաքացիական որակներ են ձևավորում: Դասագրքերում տեղ են գտնում գենդերային կարծրատիպեր բովանդակող նյութեր և նկարներ, հաշվի չի առնվում դրանց ազդեցությունը սովորողների անհատականության ձևավորման վրա, դրանք չեն նպաստում էզալիտար գենդերային մշակույթի ձևավորմանը»:

Հասարակագիտություն առարկայի համար այս խնդիրը առավել սուր և հրատապ է դրված, որովհետև հասարակագիտության ուսուցումը կոչված է ձևավորելու ապագա քաղաքացուն՝ հնարավորություն տալով նրան իր առջև ծառայած խնդիրների պատասխանը որոնելու ոչ թէ տարերայնորեն, այլ օգտագործելով այն բոլոր քաղաքացիական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, ինչպէս նաև արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները, որ ստացել է դպրոցում:

3. Առաջարկություններ

Ինչպես արդեն նշել ենք, «Գենդերային ուսուցման ինտեգրումը ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան» ծրագրի շրջանակներում «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպությունը անցկացրել է կլոր սեղանների շարք Երևանում և Հայաստանի 5 մարզերում՝ Շիրակում, Լոռիում, Սյունիքում, Գեղարքունիքում և Տավուշում: Կլոր սեղանների նպատակն էր հնարավորություն տալ Հասարակագիտություն առարկայի ուսուցիչներին և դպրոցի ղեկավաներին կիսելու իրենց փորձը, կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելու Հասարակագիտություն առարկայի բովանդակության մեջ գենդերային կրթության բաղադրիչներ ներդնելու վերաբերյալ: Կլոր սեղաններին մասնակցում էին նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության, Կրթության ազգային ինստիտուտի, Կրթության պետական տեսչության, մարզպետարանների և քաղաքապետարանների համապատասխան բաժինների ներկայացուցիչներ, կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպության անդամներ, լրագրողներ և այլն:

Կլոր սեղանների ընթացքում քննարկվում էին մեր հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրները, և այդ խնդիրների լուծման ուղղությամբ արվում էին առաջարկություններ կրթության, մասնավորապես՝ գենդերային կրթության միջոցով Հասարակագիտություն առարկայի շրջանակներում:

Ստորև ներկայացնում ենք մասնակիցների կողմից վեր հանված գենդերային հիմնախնդիրները՝

- Գենդերային խտրականության պրակտիկան հանգեցնում է կանանց և տղամարդկանց սոցիալական դիրքի և կյանքի հնարավորությունների անհամաչափությանը: Նման անհամաչափության դրսևորում է կանանց ոչ բավարար ներկայացվածությանը որոշումների կայացման գործընթացներում և ղեկավար մարմիններում /պաշտոններում:
- Անհանդուրժող վերաբերմունք և անվստահություն կա կին լիդերների նկատմամբ:
- Աշխատանքային իրավահարաբերություններում նույնպես առկա են գենդերային հիմնախնդիրներ՝ հատկապես կապված միևնույն աշխատանքի դիմաց անհամաչափ վարձատրության հետ:
- Ընտանիքում կինը և տղամարդը չունեն հավասար իրավունքներ (ընտանեկան պարտավորությունների անհավասար բաշխում, հղիության ստիպողական ընդհատում, արգելքներ, տաբուներ կանանց և աղջիկների համար և այլն):
- Կան բռնություններ կանաց նկատմամբ և՛ ընտանիքում, և՛ հասարակության մեջ առհասարակ: Ընտանեկան բռնությունը հատկապես տարածված է մարզերում, սակայն ունի թաքնված բնույթ, քանի որ կանայք չեն բարձրաձայնում այդ մասին կամ բավականաչափ իրազեկված չեն ընտանեկան բռնության դրսևորումների մասին:
- Կանայք ենթարկվում են ֆիզիկական, հոգեբանական, սեռական, ինչպես նաև տնտեսական բռնության: Շատ են կնոջ առջև դրված սահմանափակումները, այդ թվում՝ աշխատելու արգելքը:

- Ընտանիքում աղջիկ երեխաները ավելի ճնշված են և սահմանափակումների են ենթարկվում թե՛ ծնողների, թե՛ հատկապես եղբայրների կողմից:
- Հայ ընտանիքներում առկա են գենդերային անհավասարության դրսևորումներ և դերերի բաշխվածության անհամաչափություն: Օրինակ՝ ընտանիքում երեխայի դաստիարակման գործում հոր և մոր իրավունքներն ու պարտականությունները հավասար չեն: Երեխաների դաստիարակությունը համարվում է միայն կանանց գործը, պատասխանատուն մայրն է:
- Հայ հասարակությունում առկա են կնոջ դերը նսեմացնող ավանդույթներ և նորմեր: Այդ ավանդույթները առավել են ընդգծվում, իսկ նորմերը ավելի են խորանում հեռուստատեսային մամուլով լայնածավալ հաղորդումների և ֆիլմերի հետևանքով: Օրինակ՝ չամուսնացած չափահաս աղջիկը պետք է եղբորից թույլտվություն խնդրի տանից դուրս գալու կամ հագուստի/սանրվածքի կապակցությամբ: Մեկ այլ օրինակ՝ չամուսնացած կանայք և աղջիկները հաճախ պիտակավորվում են որպես «տանը մնացածներ», ում գերխնդիրը շուտափույթ ամուսնությունն է, մինչդեռ միևնույն իրավիճակում հայտնված տղամարդկանց դեպքում այդ հարցը արդիական չէ:
- Առկա են տղամարդու և կնոջ մասին կարծրատիպային պատկերացումներ: Օրինակ՝ տղամարդը համարվում է ուժեղ, առաջնորդ, որոշումներ կայացնող, իսկ կինը՝ թույլ, հնազանդ, ենթարկվող:

Այս ամենը պայմանավորված լինելով մի շարք գործոններով՝ ազգային մտածելակերպ, ավանդույթներ, հասարակության քաղաքակրթության աստիճան, քաղաքական

դրվածք, էթնոհոգեբանություն և այլն, այդուհանդերձ, հետևանք է նաև հանրային գիտակցության անբավարար մակարդակի՝ գենդերային զգայունության, գենդերային հիմնախնդիրների և դրանց դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքների և կարողությունների բացակայությամբ:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով մասնակիցներն առաջարկեցին գենդերային կրթության թեմաներ ընդգրկել Հասարակագիտություն առարկայում՝ համալրելով արդեն առկա թեմաները գենդերային բաղադրիչով և ներառելով նոր թեմաներ: Մասնավորապես՝

• ***Հասարակագիտություն առարկայի բովանդակային միջուկում և դասագրքերում ներառել առանձին թեմա «Ինչ է գենդերը, գենդերային հիմնախնդիրներ» վերնագրով: Այդ թեման պետք է ունենա հետևյալ բովանդակությունը՝***

- ✓ *Ի՞նչ է գենդերը:* Գենդեր և սեռ հասկացությունների տարբերությունը (ընդհանուր պատկերացումներ), պատմական ակնարկ:
- ✓ *Գենդերային հավասարություն* - սահմանումը, անհրաժեշտությունը հավասար իրավունքների, հնարավորությունների և պարտականությունների տեսանկյունից ընտանիքում, համայնքներում և հասարակությունում:
- ✓ *Գենդերային կարծրատիպեր* - օրինակներ հայ իրականությունից, կարծրատիպերի բացասական հետևանքների քննարկում:

- ✓ *Գենդերային խտրականություն* - դրսևորման ձևերը, պատճառները, գործոնները, դրսևորումները տարբեր հասարակություններում և հայ հասարակությունում:
- ✓ *Գենդերային հիմնախնդիրները ընտանիքում*, հասարակության մեջ, աշխատանքային և ընկերական հարաբերություններում:
- ✓ *Գենդերային անհավասարություն* - պատճառները և հիմքերը, հաղթահարման ուղիները:
- ✓ Վեր հանել գենդերային հիմքով բռնության տարատեսակները և այն դիտարկել ընտանեկան բռնության շրջանակներից դուրս:
- ✓ Իրազեկել գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի 16-օրյակի մասին և բերել արշավի հաջողված օրինակներ Հայաստանում ու այլ երկրներում:
- ✓ Լրացուցիչ տեղեկությունների համար տեղադրել գենդերային հիմնահարցերին վերաբերող էլեկտրոնային ռեսուրսներ, օգտակար հղումներ:
- ***Հասարակագիտություն առարկայի բովանդակային միջուկում և դասագրքերում ավելացնել «Ընտանեկան բռնություն» վերնագրով դաս կամ ենթավերնագիր, որը կունենա հետևյալ բովանդակությունը՝***
 - ✓ *Ընտանեկան բռնության սահմանումը:*
 - ✓ *Ընտանեկան բռնության տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական - տեսակների սահմանումը, օրինակներ յուրաքանչյուր ձևից:*
 - ✓ *Վիճակագրական տվյալներ՝ Հայաստանում և տարբեր երկրներում առկա ընտանեկան բռնության վերաբերյալ:*

- ✓ *Ընտանեկան բռնության պատճառները, հետևանքները, ընտանեկան բռնությունը հանդուրժելու պատճառներն ու հետևանքները, ընտանիքի, հասարակության վրա ունեցած ազդեցությունը:*
- ✓ *Ընտանեկան բռնության կանխարգելման մեթոդներն ու մեխանիզմները:*
- ✓ *Ի՞նչ անել ընտանեկան բռնության ենթարկվելու կամ բռնության մասին տեղյակ լինելու դեպքում:*
- ***Հասարակագիտության մեջ կան մի շարք թեմաներ, որոնք տեղին է համալրել գենդերային բաղադրիչով, այսինքն դրանք քննարկել նաև գենդերային տեսանկյունից:***
Մասնավորապես՝

- ✓ 8-րդ դասարանի «Հանդուրժողականություն» և «Հավասարություն» դասերում խոսել գենդերային հիմքով խտրականության և գենդերային հավասարության մասին:
- ✓ «Ընտանիք» (8-րդ դաս.) և «Ընտանիքի հոգեբանություն» (10-րդ դաս.) թեմաներում, որտեղ խոսվում է ընտանեկան դերերի և հարաբերությունների մասին, անհրաժեշտ է ավելացնել գենդերային դերերի, ընտանիքում գենդերային հարաբերությունների մասին նյութեր՝ իրավիճակներ քննարկելու և բանավիճելու համար:
- ✓ Հասարակագիտության 11-րդ դասարանի ծրագրում առկա է «Ընտանեկան իրավունք» թեման: Այստեղ ևս տեղին է խոսել և ավելացնել նյութեր գենդերային հավասարության մասին:
- ✓ «Առաջնորդություն» բաժնում ավելացնել կին առաջնորդների, մշակութային, քաղաքական, գործիչների,

գիտնականների, հերոսների մասին տեղեկատվություն և նկարներ, ներկայացնել նրանց հաջող փորձն ու մեծ ավանդը՝ հիշատակելով նաև հայ թագուհիներին և նրանց գործունեությունը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է վերանայել նաև հասարակագիտական այլ առարկաների պատմության և գրականության դասագրքերը՝ ապահովելու համար հավասար ներկայացվածություն:

- ✓ Հասարակագիտության դասագրքերում ավելացնել «Տերմինների բառարան», որտեղ կբացատրվեն հասարակագիտական տերմիններ, այդ թվում՝ «գենդեր»-ի ու գենդերային հիմնախնդիրներին վերաբերող հասկացություններ:

Ուսուցիչները բացի տեսական նյութից շատ էին կարևորում դրա մատուցման ձևերն ու մեթոդները՝ իրավիճակային քննարկումները, կոնկրետ դեպքերի վերլուծությունները և տեսակետների ներկայացումը, կլոր սեղաններն ու բանավեճերը այս թեմաներով: Հատկապես, կարևորում և շեշտադրում էին գործնական աշխատանքները, քանի որ այսօր ուսումնական ծրագրերում նախատեսված են գործնական աշխատանքների դասաժամեր:

• *Առաջարկվեց գենդերային թեմաների շրջանակներում որպես գործնական աշխատանքներ ներառել հետևյալ առաջադրանքները՝*

- ✓ Կատարել ուսումնասիրություններ համայնքում կանանց և տղամարդկանց զբաղվածության, տարբեր ոլորտներում նրանց ընդգրկվածության, համայնքում առկա գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ:

- ✓ Կատարել այցելություններ տեղական ինքնակառավարման մարմիններ՝ քաղաքապետարան, մարզպետարան, նաև դատարաններ, որտեղ աշակերտները մի շարք այլ հարցերի շարքում կարող են պարզել, թե քանի կին է աշխատում այս կառույցներում և ինչ պաշտոններ են զբաղեցնում, կազմել վիճակագրություն պետական մարմիններում կանանց ներգրավվածության վերաբերյալ իրենց մարզում կամ քաղաքում:
- ✓ Վերցնել ցանկացած հարց, խնդիր, որի շուրջ աշակերտը կարող է անցկացնել հարցում իր շրջապատում և վերլուծել, թե նույն հարցի վերաբերյալ ինչ պատկերացումներ ունեն տղամարդիկ և կանայք մեր հասարակության մեջ:
- ✓ Ուսումնասիրությունների արդյունքում աշակերտներին առաջարկել եզրահանգումներ անել, առաջարկել լուծման հնարավոր ուղիներ:

Անհրաժեշտ է նաև Հասարակագիտություն առարկայի շրջանակներում կազմակերպել գենդերային հիմնախնդիրներին առնչվող հանրային իրազեկման միջոցառումներ՝ սեմինարներ, կլոր սեղաններ, ակցիաներ դպրոցում՝ ոչ միայն աշակերտների, այլ նաև ծնողների, համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ, քաղաքային միջոցառումակցիաներ անցկացնել ընդդեմ գենդերային հիմքով բռնության ակտիվության 16-օրյակի շրջանակում (նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10) կամ այլ առիթներով:

4. Ամփոփում

Գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ թեմաներով դասերի նպատակը պետք է լինի պարզաբանել բոլոր այն պատճառները, որոնք հանգեցնում են գենդերային անհավասարության, և աշակերտների մեջ դաստիարակել գենդերային հավասարության մտածողություն: Սա նախ և առաջ մտածելակերպի և հայացքների փոփոխություններ է ենթադրում, յուրաքանչյուր անձի հետ կապված խնդիրների հաղթահարման ուղիների մատնանշում: Գենդերային կրթությունը կօգնի ձեռքագատվել ինքնադրսևորման արգելք հանդիսացող սեռադերային կարծրատիպերից, մտածել, գործել, ապրել ժամանակակից կյանքին համահունչ: Գենդերային կրթությունը մարդու իրավունքների և սոցիալական հավասարության համատեքստում մարդկային որակների բարելավման բավական մեծ պոտենցիալ ունի: Ինքն իրեն հարգող, ազատ ու արժանապատիվ մարդը անպայման ակտիվ կլինի իր դիրքորոշման և վարքագծի մեջ: Գենդերային կրթությունը որպես գիտելիք և մեթոդաբանություն չափազանց կարևոր է դպրոցականների քաղաքացիական կրթության և դաստիարակության համար: Այն նաև կնպաստի գենդերային հիմքով բռնության դրսևորումների կրճատմանը հասարակությունում, քանզի իրազեկվածությունը և կրթությունը դեռ դպրոցից հնարավորություն կտա թե՛ արական և թե՛ իգական սեռի ներկայացուցիչներին ճիշտ ընկալում ունենալ գենդերային հավասարության մասին, ձեռքագատվել սերնդեսերունդ փոխանցվող գենդերային կարծրատիպերից և հասկանալ, թե ինչ է գենդերային խտրականությունը և պայքարել այդ խտրականության դրսևորման դեմ:

Մենք պատրաստ ենք համագործակցել արված առաջարկությունները կյանքի կոչելու ուղղությամբ՝ հանդես գալու որպես փորձագետներ, համագործակցելու դասագրքերի հեղինակների հետ՝ տրամադրելով ուսումնական նյութեր և համապատասխան գրականություն, քննարկելու ցանկացած հարց կամ խնդիր և պարզաբանումներ մտցնելու արված առաջարկների վերաբերյալ: